

**«Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր Ստեղծողի
մոբիլ դպրոց**

2019-2020 ուսումնական տարի

«Իմացումի հրճվանք». 5-6 տարեկանների
ուսուցում

Ուսումնական պլան

Ուսուցման 1-ին առաջին տարի

Ուսումնական պլանի բաղադրիչներն են.

- մայրենի խոսքի զարգացում
 - երգ-պար
 - թվաբանություն
 - բնագիտություն
 - կերպարվեստ և տեխնոլոգիա
 - մարմնակրթություն
 - ռուսերեն, անգլերեն
 - մեդիատեխնոլոգիաներ
 - ուսումնական ներքին և արտաքին տարածքների ամենօրյա խնամք
1. Ուսումնական պլանը «Ստեղծողի մոբիլ դպրոց» հեղինակային (պետական այլընտրանքային) կրթական ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր), սովորողի ուսումնառության պայմանագրի հավելվածն է:
 2. Կրթական ծրագիրը [ընդունվում է](#) երեխան (այսուհետ՝ սովորող), որի 5 տարին լրանում է մինչև 2019թ. դեկտեմբերի 31-ը, ծնողն (օրինական ներկայացուցիչը) ընտրում է ծրագիրը և [սահմանված կարգով](#) կնքում պայմանագիր ուսումնառության մասին:
 3. Դասարանում սովորողների թիվը 20-25 է:
 4. Ուսուցումը կազմակերպվում է ուսուցողական թվային միջոցներ կիրառելով: Դասավանդողը, սովորողը դպրոցում գործածում են սահմանված տեխնիկական պայմաններին բավարարող անհատական ներթուրք-ներթուրք կամ պլանշետ, տանն ունեն համացանց: Ծրագիրը դպրոցում ապահովում է անլար ինտերնետից, համակարգչից, էլ.գրատախտակից, ձայնագրիչից, ֆոտոխցիկից ուսումնական նպատակներով անարգել օգտվելու հնարավորություն:
 5. Մեդիագրադարանը, դասվարի բլոգը, «Պարտեզ», «Բզեզ» կայքերը, դպրոցի գրադարանը սովորողին տանը, դպրոցում ապահովում են անհրաժեշտ ուսումնական էլեկտրոնային և տպագիր նյութերով, միջոցներով:
 6. Ուսումնական տարին կազմակերպվում է կրթահամալիրի, դասարանի տարեկան ուսումնական օրացույցով: Դրանցով են որոշվում ուսումնական գործունեությունները, ստուգատեսները, ծեսերը և տոները:
 7. Սովորողի ֆիզիկական-ֆիզիոլոգիական, առողջական, սոցիալական վիճակի տվյալները, դրանց փոփոխությունները, սովորողի մասին անհրաժեշտ այլ տեղեկություններ [սահմանված կարգով](#) էլեկտրոնային գրանցում են ստանում:
 8. Ուսումնական շաբաթը 5-օրյա է:

9. Գործունեության բոլոր ձևերը միավորվում են «Իմացումի հրճվանք» ծրագրում, որը ղեկավարում է դասվարը՝ իր օգնականի հետ:
10. Ուսումնական օրը ներառում է Ծրագրի 15 թույե տևողությամբ ընդհանուր պարապմունք՝ [սահմանված կարգով և ծրագրով](#):
11. Ուսումնական գործունեության կազմակերպման մեջ [սահմանված կարգով](#) կիրառվում է հեռավար-ընտանեկան ուսուցման ձևը:
12. Մայրենի խոսքի զարգացումն իրականացվում է անընդհատ՝ խթանելով սովորողի ինքնարտահայտվելու ցանկությունը: Թատերական, երաժշտական խաղերը, ներկայացումները, բանաստեղծությունների բերանացի անելը, հեքիաթների ունկնդրումն ու քննարկումները խոսքի զարգացման կազմակերպման ձևեր են: Գրավոր խոսքի ուսուցումն ու զարգացումը կազմակերպվում է ուսումնական տարվա երրորդ շրջանից՝ բանավոր գործունեությանը զուգահեռ՝ անընդհատ բավարարելով սովորողի գրել-կարդալու պահանջն ու անհրաժեշտությունը:
13. Անգլերենի և ռուսերենի ամենօրյա ուսուցումն իրականացնում է ուսումնական առաջին, երկրորդ շրջաններում դասվարը՝ մուլտֆիլմերի, ուսուցողական ֆիլմերի, երգերի ունկնդրմամբ, էլեկտրոնային խաղերով, երրորդ շրջանից՝ նաև անգլերենի, ռուսերենի դասավանդողներ:
14. Բնագիտական գործունեությունը կազմված է «Իմ խնամած բույսերը», «Իմ խնամած կենդանիները» ուսումնական նախագծերից: Բնագիտության ուսուցում իրականացվում է նաև բնության, բնական երևույթների ամենօրյա դիտարկումների, ուսումնական ագարակում իրականացվող նախագծի, ուսճամփորդությունների միջոցով:
15. Թվաբանությունն ամենօրյա գործունեություն է՝ բանավոր հաշվարկի, չափումների, համեմատությունների, համադրումների և հակադրումների ձևով:
16. Երաժշտական գործունեությունը ներառում է երգ, պար, երաժշտության ունկնդրում, ռիթմիկա-շարժում, երաժշտական գործիքների հետ ծանոթացում, երաժշտական խաղեր, պարերգեր:
17. Մարմնակրթությունն իրականացվում է ամենօրյա մարզական գործունեությամբ՝ մարմնամարզություն, եռամարտ՝ լող, հեծանվավարություն, վազք, մարզական և բակային խաղեր: Լողալ կարողանալը պարտադիր ուսումնական կարողություն է, որ կազմակերպվում է շաբաթական մեկ անգամ փակ լողավազանում, սեպտեմբերին և հունիսին՝ նաև բացօթյա:
18. Կերպարվեստ և տեխնոլոգիա գործունեությունը ներառում է նկարչությունը, ծեփը, խոհանոցային, բակային աշխատանքի, շրջակա միջավայրի խնամքի և ինքնասպասարկման աշխատանքի, ծեսերի, ներկայացումների, խաղերի, ստուգատեսների ընթացքում ձեռք բերած հմտությունները:
19. ՏՀՏ-ն հմտությունները ձեռք են բերվում ուսումնական գործունեության ընթացքում:
20. Լրացուցիչ կրթությունը դաշնամուրի, պարի, թատրոնի, կերպարվեստի, խեցեգործության, շախմատի, լողի, մարմնամարզության, թեթև ատլետիկայի ուսումնական գործունեությունն է, որոնց կազմակերպման համար սովորողի ծնողի հետ կնքվում է լրացուցիչ կրթության պայմանագիր՝ որպես ուսումնառության պայմանագրի հավելված:
21. Ամբողջ գործունեությունը սահմանված կարգով կազմակերպվում է հիգիենիկ, այդ թվում՝ բացօթյա, միջավայրում:
22. [Սահմանված կարգով](#) իրականացվող ուսումնական ճամփորդությունները ուսումնական գործունեության բաղկացուցիչն են:
23. Կրթական ծրագիրն ապահովում է սովորողի ամբողջական ներառում:
24. Սովորողի ուսուցում-զարգացումը կազմակերպվում է նաև տանը՝ ընտանեկան նախագծերի միջոցով, ծնողների մասնակցությամբ:

25. Սովորողների ամենօրյա գործունեությունը դասվարը, նրա օգնականը պարբերաբար ներկայացնում են իրենց ուսումնական բլոգներում, անհատական արժեքային համակարգի, հմտությունների, կարողությունների որակական բնութագիրը, ցուցանիշները, ծնողի մասնակցությամբ, գրանցվում են սովորողի աճի և զարգացման դիտարկման թերթիկում ըստ ուսումնական շրջանների:
26. Սովորողի ուսումնական գործունեության այլ արդյունքները ներկայացվում են ամենամսյա ստուգատեսներում (ամսիկներ), ներկայացումներում, ցուցահանդեսներում: